

Ս.Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՌՈՒՍԱՑ ԼԵՉՎՈՒՄ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՀԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ ԴՐԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դիտարկվում է դարձվածաբանության հականշության հարցը՝ որպես ռուսաց լեզվում առավել հաճախ հանդիպող երևույթ: Ուսումնասիրվում և վերլուծվում են դարձվածքային հականշությանը բնորոշ հատկությունները և եղանակները՝ հաշվի առնելով բաղադրիչների կապակցման յուրահատուկ բնույթը:

Առանցքային բառեր. գործառնություն, դարձվածաբանություն, հականշություն, օքսի-մորոն, հակադրություն, բաղադրիչ, լեզվական միավոր:

S.S. MARTIROSYAN

MEANS OF EXPRESSING ANTONYMY IN RUSSIAN PHRASEOLOGY
AND METHODS FOR TEACHING IT

The problem of phraseological antonymy as a very frequent phenomenon in the Russian language has been considered. The characteristic features and application ways have been studied and analyzed, taking into account the specific nature of components.

Keywords: functioning, phraseology, antonymy, oxymoron, antithesis, component, unit of language.

ՀՏԴ 81'366.5

Գ.Վ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՏԱՐԲԵՐ
ԼԵՉՈՒՆԵՐՈՒՄ

Քերականական իմաստները տարբեր լեզուներում կարող են ունենալ տարբեր արտահայտչաձևեր, որոնցից ներկա աշխատանքում քննարկվում են մասնիկավորումը և տարահիմքությունը՝ հնդեվրոպական և որոշ ֆիննաուգրական լեզուների լեզվական նյութի հիման վրա: Մասնավորապես, քննարկվում են մասնիկավորման առանձնահատկությունները կցական և թեքական լեզուներում:

Առանցքային բառեր. քերականական իմաստ, մասնիկավորում, տարահիմքություն, հնդեվրոպական լեզուներ, ֆիննաուգրական լեզուներ, կցական և թեքական լեզուներ:

Քերականական իմաստները տարբեր լեզուներում դրսևորման տարաբնույթ և խիստ բազմազան ձևեր ունեն: Այդ արտահայտչամիջոցներից են մասնիկավորումը, արմատի կրկնությունը, ներքին թեքումը, սպասարկու բառերի

գործածությունը, շարադասությունը, հնչերանգը, տարահիմքությունը և այլն: Կախված լեզվի տիպաբանական բնութագրից՝ այս կամ այն արտահայտչամիջոցը կարող է գերակշռող լինել: Օրինակ, մասնիկավորումը առավելապես հատուկ է կցական լեզուներին (ուրալյան, ալթայյան, դրավիդյան լեզուներ), ներքին թեքումը՝ սեմական լեզվաընտանիքի լեզուներին, շարադասության դերը մեծ է անջատական լեզուներում (չինարեն, թաի, ժամանակակից անգլերեն) և այլն [1]: Մասնիկավորումը և ներքին թեքումը բնորոշ են նաև հնդեվրոպական լեզուներին: Նշված արտահայտչամիջոցներից վերլուծվել են մասնիկավորումը և տարահիմքությունը:

Մասնիկավորում: Քերականական իմաստները կարող են արտահայտվել նախամասնիկների, միջամասնիկների և վերջամասնիկների միջոցով: Մասնիկները, ավելանալով արմատին կամ հիմքին, դրանց հաղորդում են որևէ քերականական իմաստ կամ փոխում են այդ իմաստը: Նախամասնիկները հիմնականում տարածված են ոչ հնդեվրոպական լեզուներում:

Հնդեվրոպական (հ.-ե.) լեզուներում նախամասնիկավորման օրինակներ են գրաբարյան *զ* նախամասնիկը հայցական հոլովում, աորիստի *երեր, երես, էարբ* տիպի կազմությունները, ռուսերենում կատարյալ կերպի ցուցիչ հանդիսացող նախամասնիկները (с-делать, на-писать, про-читать): Նախամասնիկավորմամբ հարուստ են հատկապես կովկասյան լեզուները. վրաց.՝ ջջըր[վծեր] «գրում եմ» - ճձջջըր[դալծեր] «կգրեմ», բայի խոնարհման հարացույցում՝ ջծջծձձ[վմուշառք] «աշխատում եմ» - ջծջծձձ[մուշառք] «աշխատում ես»:

Վերջամասնիկների գործածությունն ավելի լայն է: Դրանք կիրառելի են գրեթե բոլոր լեզուներում: Մաքուր վերջամասնիկների կիրառությունը բնորոշ է կցական տիպի լեզուներին (հատկապես ալթայյան, ուրալյան, դրավիդյան): Նշված լեզուներում մեկ մասնիկը սովորաբար արտահայտում է միայն մեկ քերականական իմաստ: Օրինակ՝ հունգ. *ház* «տուն», *ház-ak* «տներ», *ház-ak-ban* «տներում»: Ուրալյան և ալթայյան լեզուներին, ինչպես և արդի հայերենին, բնորոշ է դիմորոշ հոդի գործածությունը (հունգ. *házam* «տունս», *házad* «տունդ», *háza* «տունը»):

Արդի հայերենը, ի տարբերություն դասական հ.-ե. լեզուների և գրաբարի, գերազանցապես կցական լեզու է: Օրինակ՝ *մազ – մազ-եր – մազ-եր-ից – մազ-եր-ից-դ, գիրք – գրք-եր – գրք-եր-ում – գրք-եր—ում-ս*: Այդպիսին է նաև արդի վրացերենը. եգ.թ. *რუ* [ռու] «առու» - *հոգն.թ. რუ-ვბ-ი* [ռուեբի], *წიგნ-ი* [ծիգնի] «գիրք» - *წიგნ-ვბ-ი* [ծիգնեբի], *ծայնավորի սղումով՝ სოფელ-ი* [սոփելի] «գյուղ» - *სოფლ-ვბ-ი* [սոփլեբի], *եգ.ուղ. հ. ხელ-ი* [խելի] « ձեռք » - *եգ.սեռ. հ.ხელ-ის* [խելիս], *հոգն.ուղ. հ. ხელ-ვბ-ი* [խելեբի] - *հոգն.սեռ. հ. ხელ-ვბ-ის* [խելեբիս]: Հոգն. թվի կազմիչն է -*ვბ-* [եբ], *սեռ. հոլովի կազմիչը՝ -ის-* [իս]:

Վրացերենում կապերի գործածությունը հիմնականում համադրական է. մօգօժօճ [մագիդա-զե] «սեղանի վրա», օցնճօրօն [փանջարա-տան] «պատուհանի մոտ», յրօճօճ [քուչի-դան] «փողոցից» (սա հոլովածն է):

«Ձուլված» վերջամասնիկների կիրառությունն առավել բնորոշ է հ.-ե. լեզուներին, որոնք իրենց տիպաբանական բնութագրով թեքական են: Դասական հ.-ե. լեզուներում մեկ մասնիկը կարող է արտահայտել մեկից ավելի քերականական իմաստներ, օրինակ՝ ռուսերենում գոյականի հոլովական մեկ կազմիչը կարող է արտահայտել հոլովի և թվի քերականական իմաստներ, ածականի հոլովական մեկ կազմիչը՝ հոլովի, թվի և սեռի իմաստներ: Այդպես է նաև սանսկրիտում՝ वा [ṣvā] «շուն» - शुनः [śunah] (հոգն. թ., հայց. հ.), वारि [vāri] «ջուր» - वारिभ्यां [vāri-bh̥yām] (երկակի թ., տր. և գործ. հ.), թվականի դեպքում մեկ քերականական կազմիչը կարող է արտահայտել 3 իմաստներ՝ एकः [ēkah] «մեկ» (արակ. սեռ, եզակի թ., ուղղ. հ.), - एकैषां [ēkeṣām] (չեզոք սեռ, հոգն. թ., սեռ. հ.) [2], հ.անգլ. fōt «նոք» - fōtum (հոգն.թ., տր.հ.), nama «անուն» - namena (հոգն.թ., սեռ.հ.) [3], լատիշ. ziv-s «ձուկ», ziv-is «ձկներ», ziv-ju «ձկների», sird-s «սիրտ», sird-is «սրտեր», sirž-u «սրտերի» (-ju, -u վերջամասնիկներն արտահայտում են հոգնակի թվի և սեռական հոլովի իմաստներ): Ածականի դեպքում լատիշերենում 1 վերջամասնիկը կարող է արտահայտել 4 քերականական իմաստներ՝ սեռի, թվի, հոլովի անորոշ կամ որոշյալ առման. sald-s «քաղցր» (եզ. թիվ, ար. սեռ, ուղղ. հ., անորոշ առում), sald-ajām (հոգն. թիվ, իզ. սեռ, տր. հ., որոշյալ առում):

Թեքական լեզուներին բնորոշ է արմատի և մասնիկի/մասնիկների միաձուլումը (օր.՝ հ.սլավ. *leg-ti > ռուս. лечь, *pek-ti > печь) [4, 52-76], որը ցույց է տալիս, որ թեքական կառուցվածքին նախորդել է կցական կառուցվածքը (լեզվի կառուցվածքային տիպերը միևնույն լեզվում կարող են հաջորդել միմյանց, որը պատմականորեն անընդհատ պրոցես է):

Իտալերենի անորոշ դերբայի մի շարք ձևերում տեղի է ունեցել արմատի և վերջամասնիկի միաձուլում: Թաքնված արմատը բայի խոնարհման հարացուցում և դերբայներում կարող է կրկին հայտնվել, օր. *bevere > bere «խմել», bevo «խմում եմ», *ponere > porre «դնել», pongo «դնում եմ», *traducere (լատին. trāns+dūcere) > tradurre «թարգմանել», traduco «թարգմանում եմ», traducendo «թարգմանելով», *dicere > dire «ասել», dico «ասում եմ», dicevo «ասում էի»:

Վերջամասնիկների գործածության ձևերից մեկն այն է, երբ մասնիկավորումը զուգակցվում է ներքին թեքման կամ արմատի որոշակի փոփոխության հետ: Այսպիսի օրինակները շատ են հ.-ե. լեզուներում: Օրինակ՝ գերմ. Buch > Bücher, իսլանդ. saga > sögur «պատմություն», höfn > hafnir «նավահանգիստ», նորվ. and > ender «բաղ», tåg > tæger «թել», գրաբարում կին – կնոջ – կանայք,

գիւղ (*գեւղ*) – գեղջ, անգլ. long «երկար» – length «երկարություն», strong – strength, young – youth, deep – depth, broad – breadth:

Հ.-ե. լեզուներում մասնիկավորման հետ միաժամանակ տեղի է ունենում բաղաձայնների հերթագայություն: Օրինակ՝ ռուս. плакать – плачу, печь – пеку – печешь, сказать – сказал – скажу, видеть – видел – вижу, мочь – могу – можешь, իտալ. ներկա ժամանակի խոնարհման հարացույցում՝ rimanere «մնալ» – rimango «մնում եմ» – rimani «մնում ես», potere «կարողանալ» – posso «կարող եմ» – puoi «կարող ես», venire «գալ» – vengo – vieni, spegnere «հանգցնել» (ցո միասին արտասանվում է փափուկ ո) – spengo – spegni, cogliere (ցո տառակապակցությունն արտասանվում է փափուկ լ) «հավաքել» – colgo – cogli, volere «ցանկանալ» – voglio – vuoi: Իտալերենի *passato remoto*, այսպես կոչված, հեռավոր անցյալ ժամանակաձևում բաղաձայնների հերթագայության օրինակներ են՝ chiudere «փակել» – chiusi «փակեցի» (*passato remoto*), dividere «բաժանել» – divisi «բաժանեցի», leggere «կարդալ» – lessi, crescere «աճել» – crebbi, muovere «շարժվել» – mossi և այլն: Բայի խոնարհման հարացույցում բազմաթիվ են այնպիսի դեպքերը, երբ բաղաձայնների հերթագայությունն արտասանության մեջ կատարված փաստ է, սակայն գրության մեջ չի արտահայտվում՝ piangere «լալ» – piango «լալիս եմ» – piangi «լալիս ես», leggere «կարդալ» – leggo «կարդում եմ» – leggi «կարդում ես» (զ – ջ հերթագայություն), tradurre (*traducere) «թարգմանել» – traduco «թարգմանում եմ» – traduci «թարգմանում ես» (կ – չ հերթագայություն), finire «ավարտել» – finisco – finisci, uscire «դուրս գալ» – esco – esci (սկ – շ հերթագայություն):

Ֆիննաուգրական որոշ լեզուներում ևս մասնիկավորումը զուգակցվում է բաղաձայնների հերթագայությամբ (սովորաբար առանց արտասանության տեղի փոփոխության): Օրինակ, ֆիններենում գոյականի, ածականի և թվականի հոգնակի թվի կազմության և հոլովման հարացույցին ձևերում՝ *vesi* «ջուր» – *veden* «ջրի» – *vedet* «ջրեր», *hirsi* «գերան» – *hirren* – *hirret*, *vuosi* «տարի» – *vuoden* – *vuodet*, *hevonen* «ծի» – *hevosen* – *hevokset*, *sininen* «կապույտ» – *sinisen* – *siniset*, *uusi* «նոր» – *uuden* – *uudet*, *henki* «օդ, կյանք, հոգի» (սեռ.հ. *hengen*), *järki* «խելք» (սեռ.հ. *järjen*), *äiti* «մայր» (սեռ.հ. *äiden*), *ilta* «երեկո» – *illalla* «երեկոյան», *ranta* «ափ» – *rannalla* «ափին», *leipä* «հաց» – *leivän* «հացի» – *leivässä* «հացի մեջ», *yksi* «մեկ» (սեռ.հ. *yhden*), *kaksi* «երկու» (սեռ.հ. *kahden*), բայի խոնարհման համակարգում՝ *kieltää* «արգելել» – *kiellän* «արգելում եմ», *sulkea* «փրկել» – *suljen* «փրկում եմ», *nähdä* «տեսնել» – *näen* «տեսնում եմ» – *näkee* «տեսնում է», և այլն [5, 111]:

Եթե ռուսերեն *пеку* – *печешь*, իտալերեն *piango* – *piangi*, *traduco* – *traduci* տիպի օրինակներում բաղաձայնների հերթագայությունը քմայնացման արդ-

յունք է, ապա ֆիններենում տեղի է ունենում հնչյունների թուլացում և նույնիսկ անկում (järki – järjen, yksi – yhden, nähdä – näen – näkee) [5, 111]:

Մասնիկավորումով կարող են արտահայտվել գոյականի, ածականի, թվականի հոլովածները, գոյականի թիվը, բայի խոնարհման ձևերը, հոդերը, ածականի համեմատության աստիճանները, բայի սեռը, կերպը, և այլն: Հյուսիսային գերմանական լեզուներում (իսլանդերեն, դանիերեն, շվեդերեն, նորվեգերեն) գոյականի հոդը կարող է արտահայտվել մասնիկավորմամբ, ինչպես արդի հայերենում (երբեմն նաև սպասարկու բառերով), օր.՝ իսլանդերեն hestur «ծի», hestur-**inn** «ծին», hestar «ծիեր», hestar-**nir** «ծիերը», շվեդերեն bok «գիրք» - boken «գիրքը», fågel «թռչուն» - fågel**n** «թռչունը» (ընդհ. սեռ), hus «տուն» - huset «տունը» (միջին սեռ): Սլավոնական լեզուներից այս առումով հետաքրքիր է բուլղարերենը. баца «հայր», баца-**та** «հայրը», сърце «սիրտ» - сърце-**то** «սիրտը», град «քաղաք» - град-**ове** «քաղաքներ» град-**ове-те** «քաղաքները»: Բուլղարերենում որոշյալ հոդ են ստանում նաև ածականները [6]: Մասնիկավորմամբ են արտահայտվում անորոշ և որոշյալ առման քերականական իմաստները արաբերենում, թեպետ այն թեքականության դասական օրինակ է. 'al- նախամասնիկը որոշյալ առում է ցույց տալիս (կարող է և առանձին գրվել), -un վերջամասնիկը՝ անորոշ առում, որը նաև հոլովվում է արաբերենի բոլոր 3 հոլովներով՝ ուղղ.հ. – un, սեռ.հ. –in, հայց.հ. –an:

Վրացերենում մեկ քերականական իմաստ արտահայտելու համար երբեմն կարող է պահանջվել երկու մասնիկ, օրինակ՝ հարաբերական ածականներից շատերը կազմվում են նա- նախամասնիկով և -ո վերջամասնիկով՝ ქალაქ-ი [քալաքի] «քաղաք», նա-ქალაქ-ო[սաքալաքო], դերբայների կազմության մեջ՝ და-წერ-ო-ი [դաձերիլի] «գրված», მ-ტან-ო-ი [մոտանիլի] «բերված», მ-წერ-ა-ლ-ი [մձերալի] «գրող», მ-დ-უ-ლ-ა-რ-ე [մդուլարե] «եռացող» (արմատներն են՝ წერ, ტან, დულ):

Այսպիսով, մասնիկավորումը լեզուներում քերականական իմաստների արտահայտման ամենագործածական միջոցներից է: Այն տարածված է բազմաթիվ լեզվաընտանիքների պատկանող լեզուներում. կարող է լինել մաքուր մասնիկավորում՝ կցական կառուցվածքի դեպքում, խառը մասնիկավորում, երբ մեկ կազմիչն արտահայտում է մեկից ավելի քերականական իմաստներ: Մասնիկավորումը կարող է զուգակցվել՝ ա) ներքին թեքման կամ բ) բաղաձայնների հերթագայության հետ:

Տարահիմքություն: Տարահիմքությունը քերականական իմաստների արտահայտման յուրօրինակ միջոց է, որի դեպքում քերականական իմաստն արտահայտվում է այլ, հաճախ տվյալ բառի հետ ծագումնաբանական կապ չունե-

ցող արմատի միջոցով, որը տարածամանակյա հետազոտությունների տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Ուշագրավ է այն փաստը, որ բազմաթիվ լեզուներում տարահիմքությամբ են արտահատված *մեկ* (երբեմն՝ *երկու*) դասական թվականը, *լինել* բայի, անձնական դերանունների հարացուցային մի շարք ձևեր, *մարդ* բառի հոգնակի թիվը և այն ածականների համեմատության աստիճանները, որոնք ցանկացած լեզվի հիմնական բառային ֆոնդի մաս են կազմում և ամենաաղքատիկ բառապաշարի պարագայում անգամ չեն կարող չլինել լեզվի մեջ, այսինքն՝ լեզվի ամենահնագույն բառային շերտի մաս են (մեծ – փոքր, լավ – վատ և այլն): Տարահիմք քերականական ձևերը վաղնջական անցյալում հավանաբար ընկալվել են իբրև ինքնուրույն նշանակություն ունեցող բառեր:

Օրինակներ՝ հայ. *մի* – *տառջին*, ռուս. один – первый, իսլանդ. einn «մեկ» – fyrsta «տառջին», tveir «երկու» – annar «երկրորդ», անգլ. one – first, two – second, լատին. unum – primum, հուն. ένας – πρώτα, հինդի एक [ek] – पहला [pahla], լատիշ. viens – pirmais, divi – otrais, իտալ. vienas – prima, du – antra, ֆինն. yksi «մեկ» – ensimmäinen, kaksi «երկու» – toinen, էստոն. üks – esimene, kaks – teine, հունգար. egy – első, kettő – második, վրաց. ერთი [երթի] - ზორველი [պիրվելի], բասկ. bat «մեկ» - lehen, մոկչաներեն фкя - ваченце, кафта - омбоце, տաջիկ. як – аввал, մոնղոլ. нэг- эхний, և այլն:

Լինել բայը տարբեր լեզուներում ունի մի շարք տարահիմք ձևեր՝ իտալ. essere «լինել» - sono, sei, è (եմ, ես, է), ero, eri, era (էի, էիր, էր), fui, fosti, fu (*passato remoto*), լատիշ. būt «լինել» - esme, esi, ir (եմ, ես, է), անգլ. to be «լինել» - am, are, is, գերմ. sein «լինել» - bin, bist, ist, իտալերենի այլ բայերում՝ avere «ունենալ» - ho, hai, ha (ունեմ, ունես, ունի), andare «գնալ» - vado, vai, va (գնում եմ, գնում ես, գնում է): Գրաբարյան տարահիմք ձևերից հայտնի են. *լինել* – ներկա՝ *լինիմ, լինիս, լինի*, անցյալ կատարյալ՝ *եղէ, եղեր, եղես, գալ* – ներկա՝ *գամ, գաս, գայ*, անց. կատ.՝ *եկի, եկիր, եկն, ուրել* – *ուրեմ, ուրես, ուրէ, կերայ, կերար, կերաւ, ունել* – *ունիմ, ունիս, ունի, կալայ, կալար, կալաւ*, և այլն: Ռուսերենում տարահիմք բայաձևերի օրինակներ են՝ брать – брать, иду – хожу – шел [7, 236]:

Անձնական դերանունների տարահիմք ձևերի օրինակներ են՝ հայ. ես – իմ, ինձ, ռուս. я – меня, он – его – ему, հ.անգլ. ic- mīn « ես - իմ», wē - ūre, ūser «մենք -մեր», 3ē - ēower «դուք - ձեր» [3], անգլ. I – me, my, we – our, us, գերմ. Ich – mich, շվեդ. jag – mig «ես – ինձ», ni – er «դուք – ձեզ», լատիշ. es – manis, և այլն:

Հինդի լեզվում տարահիմք են՝ यह [yaha] «այս», թեք հոլովում՝ इस [is] «սրա», वह [vaha] «այդ» - उस [us] «դրա», ये [ye] «սրանք» - इन [in] «սրանց», वे [ve] «դրանք», उन[un] «դրանց»:

Տարահիմքությամբ են կազմվում որոշ ածականների/մակբայների համեմատության աստիճանները՝ հ.հուն. ἀγαθός «լավ» - ἀμείνον- ἄριδιος, լատին. bonus – melior – optimus, malus – peior – pessimus, parvus – minor – minimus, իտալ. buono – migliore – ottimo, cattivo – peggiore – pessimo, grande – maggiore – massimo, piccolo – minore – minimo, անգլ. good/well – better – the best, bad/badly – worse – the worst, շվեդ. god, bra – bättre – bäst, dålig «վատ» – sämre – sämst, ond «վատ, չար» – värre – värst, իսլանդ. illur «վատ» – verri – verstur, ռուս. хороший/хорошо – лучший/лучше, плохой/плохо – худший/хуже, ֆինն. hyvä «լավ» – parempi – paras, սանս. आंत्तिक [antika] «մոտ» - नेदीयस् [nediyas] – नेदिष्ठ [nediṣṭʰa], अल्प [alpa] «փոքր» - कनीयस् [kanīyas] – कनिष्ठ [kaniṣṭʰa], उरु [uru] «լայն» - वरीयस् [variyaṣ] – वरिष्ठ [variṣṭʰa] [2]:

Միևնույն արմատից չեն մարդ բառի հոգնակիները մի շարք լեզուներում՝ ռուս. человек – люди, իտալերեն uomo – gente, գերմ. Mensch – Leute:

Տարահիմքության շատ օրինակներ լեզուների պատմության հնագույն շրջանից մնացած երևույթ են: Տարահիմք բառերից մեկը կարող է փոխառություն լինել այլ լեզվից: Այսպես, հինդի آدمी[ādmi] – पुरुषो [puruṣon] տաջիկ. одам – мардум, դազախ. адам – ерлер օրինակներում մարդ բառի եզակին ակնհայտորեն օտար փոխառություն է (աղավ), իսկ հոգնակին կազմվել է տվյալ լեզվում գոյություն ունեցած կամ գոյություն ունեցող բառի եզակի թվից, այն է՝ սանս. पुरुष [puruṣa] «արու, այր մարդ», թյուրքական ер (նույն նշ.) և իրանական *mard* արմատներից:

Տարբեր լեզուներում քերականական իմաստների արտահայտման ձևերի քննությունն առնչվում է դրանց ծագման խնդրին: Այդ արտահայտչամիջոցների տարաժամանակյա զննությունը նպատակ ունի բացահայտելու *տարահիմք ձևերի և մասնիկների ծագումը և նախնական իմաստը*, որը խիստ կարևոր է համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունների տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Խաչատրյան Լ.Մ.**, Լեզվաբանության ներածություն, Եր., 2008.
2. **F. Max Muller M.A.** Sanskrit Grammar.- London, 1870.
3. **Rastorgueva T.A.** History of English.- M., 1983.
4. **Реформатский А.А.** Агглютинация и фузия как две тенденции грамматического строения слова // Лингвистика и поэтика. - М., 1987. -С. 52-76.
5. **Նիկողոսյան Գ.**, Հայ-ֆիննաուգրական լեզվական առնչություններ (թեկնածուականատենախոսություն), Երևան, 2011, էջ 111:
6. **Alexander R., Mladenova O.** Bulgarian Grammar, Vol. 1.- London, 2000.- 393p.
7. **Маслов Ю.С.** Введение в языкознание.- М., 1987. - С. 236.

Г.В. НИКОГОСЯН

**ФОРМЫ ВЫРАЖЕНИЯ ГРАММАТИЧЕСКИХ ЗНАЧЕНИЙ В РАЗНЫХ
ЯЗЫКАХ**

Грамматические значения в разных языках могут иметь различные формы выражения, из них в настоящей работе рассматриваются аффиксация и супплетивизм в индоевропейских и финноугорских языках. В частности, рассматриваются особенности аффиксации в агглютинативных и флективных языках.

Ключевые слова: грамматическое значение, аффиксация, супплетивизм, индоевропейские и финноугорские языки, агглютинативные и флективные языки.

G.V. NIKOGHOSYAN

**FORMS OF EXPRESSING THE GRAMMATICAL MEANINGS IN
DIFFERENT LANGUAGES**

Grammatical meanings in different languages may have various forms of expression, of which in the present work affixation and suppletion in Indo-European and Fenno-Ugric languages are analyzed. In particular, the peculiarities of affixation in agglutinative and flective languages are observed.

Keywords: grammatical meaning, affixation, suppletion, Indo-European and Fenno-Ugric languages, agglutinative and flective languages.

ՀՏԴ 82-3:821.19

L.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ԽՆԴՐԱՅԻՆ ԲԱՐԴ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ
ՀԵՏՏՍԱԼԻՆՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ**

Հայ լեզվաբանության մեջ **խնդիր ստորադաս բաղադրիչով բարդ նախադասությունը** նվիրված բազմաթիվ մենագրություններ կան, որոնց հեղինակները մանրամասն ուսումնասիրել են բարդ կառույցի այդ տեսակը, վեր հանել դրանում գործող քերականական օրինաչափությունները: Կատարվում է նշված կառույցի հետազոտություն կոնկրետ ոլորտից՝ հետստալինյան շրջանի (50-60-ական թթ.) հայ արձակից բերվող օրինակներով:

Առանցքային բաներ. բարդ նախադասություն, խնդրային ստորադասություն, զդրվածավոր կապակցություն, շարահարական կառույց, շարադասություն, հնչերանգային ավարտվածություն:

Խնդրային ստորադաս բաղադրիչով բարդ նախադասությունը՝ որպես բարդ ստորադասական նախադասության տեսակ, կրելով քերականական այդ կառույցին հատուկ **ստորադասական հարաբերության** հատկանիշը, միաժա-